

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՏԱՐԵՑՆԵՐՈՒ ՏԱՆ

Հայ Նրուսադէմի մէջ Տարեմուտը (Կաղանգը) կը տօնուի Հին Տօմարի համաձայն, որ կը հաւասարի Նոր Տօմարի Յունուար 14ին:

Հստ ընկալեալ տպբերութեան, Նոր Տարուան տօնին առիթով, Կիրակի օր՝ Յունուար 14ին, կէսօրէ ետք ժամը Յին, Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Տ. Սամուէլ Մ. Վրդ. Աղոյեանի, Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեանի եւ Տ. Թեադորոս Արդ. Զաքարեանի այցելեց Զիթեմեաց լերան մօտ Ագարիայի մէջ հաստատուած "Վիշտերուն Մեր Մօր" Տարեցներուն Տունը: Այս Տան մէջ կը խմամուսին ամէն ազգի եւ կրօնի պատկանող տարեցներ: Բնակիչներուն կարգին կան հայ տարեցներ:

Երբ Պատրիարք Սրբազան Հօր հետ ժամանեցին, հոգատարող գլխաւոր մայրապետը սիրալիւր ողջունեց մեզ եւ առաջնորդեց այն սրահը, ուր հաւաքուած կը պատկեն բոլորը: Պատրիարք Սրբազան իւրամանչիւրին անձամբ ողջունեց, գոհունակութեան զգացում ներշնչելով բոլորին: Յանուն Տարեցներու Տան կազմին եւ բնակիչներուն, գլխաւոր մայրապետը արարեղծ լեզուով բարի գալուստ մաղթեց Պատրիարք Սրբազան Հօր եւ իրեն ընկերակցողներուն: Մեր ժամանումէն առաջ արդէն հոն էին Տօքթ. Անուշ Նազգաշեան եւ Պրն. Կարօ Տէմիրճեան իր երաժշտական գործիքով: Պրն. Կարօն արարեղծի թարգմանեց Տօքթ. Նազգաշեանի Նոր Տարուան շնորհաւորական եւ քարի գալուստի խօսքերը, ըսելով, թէ այսպէս ամէն տարի Պատրիարք Սրբազան Հայրը ժամանակ կը տրամադրէ այցելելով տարեցներու այս տունը, ուրախացնելով եւ ոգեւորելով անոր բնակիչները, տալով անոնց իր օրհնութիւնները: Տիկ. Անուշ եւ Պրն. Կարօ մերկանքուն համար երգեցին հայերէն եւ արարեղծի երգեր: Կային ծամօթ երգեր որոնց մասնակցութիւն քերին բոլորը ծափերով եւ երգելով: Գոհունեցան տարեցներ, որոնք մահւ մեծերգեցին օրհնութեան եւ քարեմաղթութեան խօսքերով: Այդ երգողներուն մէջ կար յատկապէս Կաթողիկ եկեղեցական մը: Նոյն այդ ոգիով մենեղեց հայ քաղաքացի տարեց տիկին մը, այնպէս ինչպէս տվոր էին իրենց մանկութեան ընկ Նրուսադէմացի հին քաղաքացիները, երբ քարի գալուստ եւ արեւշատ օրեր կ'ուզէին մաղթել Պատրիարք Սրբազան Հօր, անոր այցելութեան առիթով: Մթնոլորտը այնքան գուարթ էր որ մոյմիսկ կարգ մը տարեցներ պարեցին: Տիկին Նազգաշեան իր լաւագոյնը ըրաւ որ բոլորը կարենան իրենց մասնակցութիւնը քերել օրուան ուրախութեան:

Այս Տան բնակիչ է մահւ Միարանութեանս անդամներէն Տ. Ոսկի Վրդ. Որդիեան, որ ծանր գործողութեանց ենթարկուելէն վտոյ, խօսակցութեան ձայնալարերէն եւս զրկուած է: Սակայն ամէն անգամ յանկ այցելութեան կամ Պատրիարք Սրբազան Հօր մերկայութեան յուզիչ կերպով կ'երգէ եւ կ'ամբողջացնէ ծանր "Սուրբ Աստուած... որ խաչեցար վասն մեր": Այս առիթով եւս երգեց եւ մերկայ հայերը իրեն ընկերացան: Մեզ համար Նոր Տարուան ուրախութիւնը ստացաւ տարբեր գեղեցկութիւն մը, անոր համար որ յիշեցինք անձեր որոնք անկարող էին ունեւալ այդ ուրախութիւնը առանձին: Մենք սրտովին գոհունակ էինք, որ այդ օր կարողացանք քիչ մը փոփոխութիւն մտցնել տարեցներու միապաղաղ կեանքին մէջ: Իրենց աղօթքներն ու օրհնութիւնները մեզի համար եղան քաջախիւրամ եւ հոգեկամ մխիթարանք:

Այսպէս մէկուկէս ժամ տեւող ուրախութեան պահը աւարտուեցաւ Պատրիարք Սրբազան Հօր օրհնութեան խօսքերով, գնահատելով անձներէն ծառայութիւնը մայրապետներուն, որոնց մուրաւանջ "Վիշտերու Մեր Մօր" այս Տունը վերածուած է ընտանեկան եւ օրհնուած հաստատութեան մը:

ՍԱՄՈՒԷԼ Մ. ՎՐԴ. ԱՂՈՅԵԱՆ